ՈՉ ԳՐԱԿԱՆ (ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԵՎ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ) ԼԵԶՎԱՇԵՐՏԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ «ԱՇՆԱՆ ԱՐԵՎ» ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

ՀՏԴ 81.28 *DOI: 10.52063/25792652-2021.1-144*

ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Գորիսի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար,
Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման անդամ,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք. Գորիս, Հայաստանի Հանրապետություն
smanucharyan81@mail.ru

Հոդվածում քննել ենք «Աշնան արև» ստեղծագործության ոչ գրական (բարբառային և խոսակցական) լեզվաշերտը: Հետազոտության նպատակն է ներկայացնել այդ լեզվաշերտը ներառող տարրերի լեզվաոճական դրսևորումները: Այս նպատակից բխող խնդիրն է նկարագրել բնագրային քննվող իրողությունների առանձնահատկությունները:

Ուսումնասիրության բնագրում առկա գրական նորմից շեղվող խոսակցական ու բարբառային իրողությունները հիմնականում ընդհանրական են Արարատյան ու Ղարաբաղի բարբառների համար և մասնավորապես բնորոշ՝ Լոռու խոսվածքին: Դրանք տարբեր հնչյունափոխության հետևանքով ձևավորված բառային ու քերականական երևույթներ են: Այս ստեղծագործության մեջ ոչ գրական լեզվաշերտի բառերն ու արտահայտությունները գործածվել են հիմնականում գեղարվեստական միջավայրի ու կերպարների կերտման նպատակով: Նման ձևերով հարուստ է հատկապես կերպարների խոսքը: Ժողովրդախոսակցական ու բարբառային լեզվաշերտերը գրականից տարբերվում են նաև անվանական ու բայական հարադրություններով, որոնք ևս տարածված են քննվող բնագրում: Բարբառային բառաշերտի մեջ դասվող բառաձևերն ու քերականական իրողությունները տեղայնացված բնույթ ունեն, որոնց անհրաժեշտ կիրառումը հուզարտահայտչական երանգավորում է հաղորդում գեղարվեստական խոսքին:

Հետազոտության ընթացքում գործածվել են համադրության և համեմատության մեթոդներ:

Այսպիսով՝ քննվող լեզվանյութի մեջ ներկայումս գրական ձևերից հետո ցգալի կշիռ ունեն ժողովրդախոսակցական, ապա և՝ բարբառային տարբերակները, քիչ են միայն Լոռու խոսվածքին հատուկ բառերն ու արտահայտությունները:

* Հոդվածը ներկայացվել է 15.01.2021թ., գրախոսվել՝ 19.01.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.03.2021թ.:

Հիմնաբառեր՝ *բարբառային բառեր, ժողովրդախոսակցական բառաշերտ, խոսվածքային բառաձևեր, լեզվաոճական դրսևորումներ, պատկերավորություն, ժողովրդական լեզվամտածողություն, գեղարվեստական խոսք, ոճական նշանակություն:*

Հրանտ Մաթևոսյանը մեր այն գրողներից է, որոնք անվարան օգտվել են հայերենի հարուստ բարբառային ու ժողովրդախոսակցական իրողություններից՝ գործածելով դրանք կերպարակերտման, գեղարվեստական միջավայրի նկարագրման ու ամբողջացման նպատակով:

Հարկ ենք համարում նշել, որ լեզվաբաններից ոմանք «Աշնան արև» ստեղծագործության լեզվանյութի քննությանն անդրադարձել են մասամբ և տարբեր տեսանկյուններից[458]:

Խնդրո առարկա նյութում առկա գրական նորմից շեղվող խոսակցական ու բարբառային իրողությունները, տարածված լինելով **Ում** ճյուղի՝ հիմնականում Արարատյան ու Ղարաբաղի բարբառներում, մասնավորապես Լոռու խոսվածքում, բառային ու քերականական մակարդակներին պատկանող այնպիսի երևույթներ են, որոնք ժամանակի հոլովույթում տարբեր հնչյունափոխություններ են կրել: Քննվող լեզվանյութի մեջ համաժամանակյա կտրվածքով գրական ձևերից հետո զգալի կշիռ ունեն ժողովրդախոսակցական ու բարբառային տարբերակները:

Մաթևոսյանի այս ստեղծագործությունը նույնպես ներառում է հաղորդակցման կենդանի բարբառային-խոսակցական և գրական լեզվատարբերակներին հատուկ միավորների «...լեզվաոճական անկրկնելի հնարանքներով»[459] կառույցների համադրումներ:

Ինչպես իրավացիորեն նշել է Ա. Մարությանը, «...ժողովրդախոսակցական բառերն ավելի շատ գործածել են այն գրողները, որոնք իրենց ստեղծագործություններում արտացոլել են ժողովրդի կյանքն ու կենցաղը, նրա հարազատ տարերքը, կենդանի խոսքը, բառ ու բանը, ժողովրդական լեզվամտածողությունը»[460]:

Գեղարվեստական խոսքին ժողովրդախոսակցական ոճին բնորոշ պարզության ու անմիջականության երանգ հաղորդելու միտումով հեղինակը կիրառել է բարբառային ու խոսակցական այնպիսի իրողություններ, որոնք լեզվի տարբեր մակարդակների միավորներ են:

Հնչյունական իրողություններ: **Ում** ճյուղի բարբառներում տարածված հնչյունափոխական երևույթներից է **այ>է** անցումը, որի արդյունքում առաջացած բառաձևերի մի մասը, հաճախադեպ կիրարկություն ունենալով, այսպես ասած, դուրս է եկել բարբառային լեզվաշերտից, ուստի դրանց մեծ մասը կարելի է համարել խոսակցական: Իբրև այդպիսին՝ առանձնացրել ենք **էս, էդ, էն** ցուցական դերանունները և դրանցից բաղադրված կազմությունները, որոնք ևս բավականին շատ են գործածված մաթևոսյանական արձակի էջերում. երբեմն մեկ նախադասության մեջ կարելի է

---

[458]Տե՛ս **Եզեկյան Լ.,** Հրանտ Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի հարցեր, Երևան, 1986, 170 էջ, **Խաչատրյան Գ.,** Բարբառային-ժողովրդախոսակցական տարրերը Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործություններում, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1988, թիվ 3, էջ 23-32, **Հալաջյան Մ.** Բարբառային բառերը և նրանց ոճական արժեքը Հ. Մաթևոսյանի արձակում, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 2001, 2(104), 171-177 էջ, **Հալաջյան Մ.** Հրանտ Մաթևոսյանի արձակի բառապաշարի շերտերը և դրանց ոճական արժեքը, Երևան, 2005, 192 էջ, **Հալաջյան Մ.,** Հրանտ Մաթևոսյանի արձակում բառագործածության ինքնատիպ իրողությունների մասին, Մաթևոսյանական ընթերցումներ, Երևան, 2017, 175-186 էջ, **Սահակյան Կ.,** Բարբառային բառերի և դարձվածքների կիրառությունը Հրանտ Մաթևոսյանի «Օգոստոս» և «Ծառերը» ժողվածուներում, Մաթևոսյանական ընթերցումներ, Երևան, 2017, էջ 187-198:

[459] **Սահակյան Կ.,** նշվ. աշխ., էջ 188:

[460] **Մարության Ա.,** Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, «Նաիրի», 2000, էջ 210:

հանդիպել մեկից ավելի ձևերի, այսպես՝ «էս ինչո՞ւ է էսքան հանել, էս կարա՞գն էս ինչու է էստեղ»[461], «-Էնպես ես ասում՝ հեռու, կարծես Հայաստանից դուրս է» (336), «...«էս մարդը իմն է». էդ մարդուն մայր չի ծնել, հենց էդպես պատրաստ եղել է» (339), «Գնա տես էն ձին արածո՞ւմ է» (337), «Էդ բկիդ կոճակն արձակիր»(413),«-Էդտեղ անպետք գիրք չկա» (338) և այլն: Բառասկզբում գործող այս հնչյունափոխությամբ այլ օրինակներ ևս խոսակցական լեզվաշերտը կազմող բառերից են, այսպես՝ *էսօր*՝ «Իմը իմ Փիլոն է, էսօր երկուսով երկու հավ ենք կերել»(373), *էգուց*՝ «-Էգուց էն ճաշը կտաքացնեք, էգուց չէ մյուս օրվա ճաշը Նազիկը կգա կեփի»(339) և այլն: Իսկ բառամիջում այս հնչյունական անցմամբ ձևավորված տարբերակներում և նրանցից կազմված բառաձևերում Հ. Մաթևոսյանը սակայն պահպանել է գրական ուղղագրությունը, ինչպես՝ *փայտ>փէտ-փետ*՝ «Մուրադեց Ռխաբացը հանդ գնալիս տանձենուն փետը քաշեց»(338), «...քո փետածեծը ինձ տակ չարեց» (343), «...գիր գտան շեմքափետի տակ»(355), *եղբայր>ախպէր-ախպեր*՝ «Ախպերդ էլ էր ասում» (338), *հայր>հէր-հեր*՝ «Հերդ էլ սովա՛ծ սոված, ծարա՛վ ծարավ» (338), *ձայն>ձէն-ձեն*՝ «...կախարդ, ձենդ դուրս չգա» (349), *մայր>մէր-մեր*՝ «...այ մեր, մենք էն ենք, ինչ որ դու ուզում էիր» (339), *կայծ>կէծ-կեծանալ*՝ «...տաքդեղի շարուկը կեծանում էր» (360), *սայլ>սէլ-սել*՝ «-Սել ես սարքո՞ւմ» (403), *գայլ>գէլ-գելերոց*՝ «...գելերոց լինես, նանի ջան»(355) և այլն: Այս փոփոխությունը գործում է *երէխէք, տըղէ(ր)ք, տըղէն(ս,դ)* օրինակներում, որոնցում «...գրաբարյան ընկած յ վերջնահնչյունը վերականգնվում է»[462] հոդերից և հոգնակերտ մասնիկներից առաջ՝ ձևավորելով փակ վանկ, այսպես՝ «...չգիտեմ մերը պրծե՞լ է թե երեխեքն են կորցրել» (367), «...տղերքդ էլ ողջ-առողջ պտույտ են գալիս շուրջդ»(358), «...տղերքը բռնեցին թե...»(412), «-Տղես քեզանից սեր չտեսավ»(363), «...տղեդ էր սիրո արժանի լինելու» (363) և այլն: Ժողովրդախոսակցական բառաշերտին կարելի է դասել նաև այլ հնչյունափոխություններ կրած բառաձևեր, ինչպես՝ *ե>ի՝ երեկոյ>իրիկուն* (Լոռու խոսվածքում՝ *«ըրիգու»*[463])՝ «...իրիկունը տուն գա»(361), «...խոզարած Նիկալ պապը մի իրիկուն եկավ»(354), «...իրենց դռանը իրիկնամուտի մեջ կանգնել էին» (344), *եաւ>օվ*[464]՝ *բարեաւ>բարով*՝ «Բարով եկար, քաղաքացի. ուր գնացիր, ուր եկար» (347), նաև՝ բառասկզբի *է>ի* անցում՝ հոլովման ժամանակ՝ *էշ-իշին-իշով*՝«...հյուր եկավ՝ ղազախեցի չարչին իշով...»(391), «-Իշին ե՞ս դրել նանին»(366) և այլն: Ընդգծված բառաձևերից մի քանիսը (*փետ, կեծանալ, սել, իշին*) մեր օրերում ևս հատկանշական են բարբառային բառաշերտին, քանի որ շարունակում են պահպանել տարածքային սահմանափակ գործառման բնույթը: Խնդրո առարկա բնագրում հնչյունների անկմամբ ձևավորված բառաձևերը ևս բնորոշ են բարբառային ու խոսվածքային լեզվաշերտերին, այսպես՝ **հ<յ-**ի՝ *աչօղ* (<հաչ/ջօղ <յաջողղ)՝ (ժամանակակից ընկալմամբ դիտարկել ենք անկում, քանի որ Լոռու խոսվածքում «...**յ**-ն ընկնում է կամ վերածվում **հ**-ի»[465], իսկ Արարատյան բարբառում կիրառական է նաև *հաչօղ* ձևը[466])՝ «...որ տեսնես աջո՞ղ է խփում թե անաջողղ» (360), **ր**-ի՝ *շընհավօր* (<շընահավօր<շնորհաւոր)՝ (որին հաջորդել է *ո>ա* առնմանումը՝ ձևավորելով **շընահավօր** տարբերակը, որն առկա է Արարատյան բարբառում[467], որին և հաջորդում է **ա**-ի սղմամբ **շընհավօր**-ը)՝ «-Էկել եմ ձեր տունը շնհավորեմ...» (354), *Գիքոր*(<Գրիգոր)՝ «Գիքորի Մարգոն» (358): Հնչյունների անկմամբ և *ե>ի* հնչյունափոխությամբ ձևավորված տարբերակ է *ապի* բառաձևը՝

[461] **Մաթևոսյան Հ.,** Ծառերը, Երևան, «Սովետական գրող», 1978, էջ 344: Այս գրքից քաղված մյուս օրինակների մոտ փակագծերում այսուհետ կնշվի միայն էջը:

[462] **Ասատրյան Մ.,** Լոռու խոսվածքը, Երևան, ԵՊՀ հրատ., 1968, էջ 58:

[463] Տե՛ս նույն տեղում, էջ 51:

[464] Տե՛ս նույն տեղում, էջ 59:

[465] Տե՛ս նույն տեղում, էջ 79:

[466] Տե՛ս **Մարկոսյան Ռ.,** Արարատյան բարբառ, Երևան, «Լույս», 1989, էջ 310:

[467] Տե՛ս նույն տեղում, էջ 80:

եղբայր>ախպէր>ապէր «1.մեծ եղբայր, 2. հայր, 3.հորեղբայր, 4. հարգական տիտղոս», որից էլ՝ *ապի* «1. հայր, 2. հարգական տիտղոս, որով դիմում են ավագ տղամարդկանց»[468]՝ «-Ապի...ապի, եթե առանձին ապրեի, ապի»(347):

Արդի գրական հայերենից շեղում է նաև **ն** վերջնահանգ ունեցող **փռնից** բառաձևը, օր.՝ «Սիմոնը փռնից մի հինգ հաց վերցրեց, գնաց շաքար առնելու» (421) և այլն:

Հայտնի է, որ «...ժողովրդական լեզուն աչքի է ընկնում զարմանալի սեղմությամբ, հակիրճությամբ, որն արտահայտվում է նաև անձնանունների կրճատման, ձևափոխման մեջ»[469]: Հայերենի արևելյան խմբակցության բարբառներին հատուկ անձնանունների կրճատմամբ ձևերը, լինելով ժողովրդական լեզվամտածողության տարրեր, մտերմական երանգավորում են հաղորդում ուսումնասիրության առարկա բնագրին՝ կիրառված լինելով տարատեսակ կառույցներում՝ շարահյուսական տարբեր պաշտոններով, միաժամանակ հասարակ գյուղացիների կերպարների կերտման ոճական հնարք են: Այսպես՝ *Աղավնի, Արմենակ, Արուսյակ, Նիկոլայ, Աստվածատուր, Արտաշես* անունների փոխարեն գործածել է *Աղուն*՝ «Աղունը նպատակին հասավ»(337), *Արմեն* կամ *Արմո*՝ «-Քո տարիքին Արմենը պիես էր գրել» (387), «Քեզ համար պալատ սարքեցինք, Արմո՛...»(351), *Արուս*՝ «Գնա, Արուս ջան, լուրը տար Ծմակուտին»(357), *Նիկալ*՝ «Լո՛ւյս դառնաս, Նիկալ պապի»(354), *Աստատուր*՝ «...լույս դառած Աստատուր հորեղբայրը դիվոտում էր» (342), *Արտաշ*՝ «Արտաշը կոլխոզը կողոպտեց, կողոպտեց»(338) և այլն: Խնդրո առարկա բնագրում, ի տարբերություն նշված տարբերակների, հաճախակի կիրառելիությամբ առանձնանում են «բաղաձայն+վերջնահանգ **ո**»[470] կաղապարով կազմված բարբառային-խոսակցական անձնանունները, որոնք «...գործածվում են առտնին, սովորական խոսակցության ժամանակ»[471], օր.՝ Մարգարիտի փոխարեն՝ *Մարգո*՝ «Գիքորի Մարգոն, Ներսեսի Մարգոն» (358), Տիգրանի փոխարեն՝ *Տիգո*՝ «Ասորենց Տիգոյին» (360), Փիլիպոսի փոխարեն՝ *Փիլո*՝ «-Փիլոյի ճկույթի հետ չեմ փոխի» (370), Երջանիկի փոխարեն՝ *Երջո*՝ «Լավ արաղից Երջոյին մի բաժակ պիտի խմեցնել» (340), Համբարձումի փոխարեն՝ *Համբո*՝ «...որ սարքել էր Համբոյի գողությամբ»(347), Աթանեսի փոխարեն՝ *Աթո*՝ «Աթոյենց Ստեփանը տնկվեց» (353), Սարգիսի փոխարեն՝ *Սաքո*՝ «...որ Սաքոն տվեց իբր թե անվարձ» (354) և այլն: Նմանատիպ ձևերը ժամանակի ընթացքում, կարելի է ասել, դուրս են եկել նեղ բարբառային գործածությունից: Անձնանունների բարբառային հնչատարբերակներից է Սմբատ անվան նախաձևը՝ *Սումբաթ* (վերջինս առկա է նաև վրացերենում[472])՝ «Սումբաթի դռնից ծիկրակեց նրա անող-դնող Գոհարը» (409), նաև՝ *ու>ի* հնչյունափոխություն կրած *Մանիշակ*-ը՝ «Հորաքույր Մանիշակի հետ սկեսուրը կռվել էր» (350) և այլն: Բառերի ամփոփման հնչյունական իրողության խոսակցական ու բարբառային օրինակներից են[473]՝ *յէսիմ* «ես ինչ իմանամ»՝ «Արզումանյանի եղբայրը կին բերեց ռաստովներից եսիմ ում» (345), *այտա*՝ «այ տղա»՝ «-Այտա ի՞նչ է»(340), *համմէ՞*(<հրամմէ<ի՞նչ հրամմեցիր<ի՞նչ եք հրամայել[474]) «ի՞նչ, ի՞նչպես»՝ «Համմե՞»(402):

Մեկ այլ դեպքում բաղաձայնների կուտակումից խուսափելու՝ լեզվի բարեհնչունության պահանջով ավելացնում են տարբեր ձայնավորներ: Խոսվածքային լեզվաշերտի մեջ կարելի է դասել բառաճման ժամանակ **ը**-ի հնչյունափոխված հետևյալ բառերը՝ «Հովրտի տերտերը ասել էր» (355), «Եղրշի Արուսյակ քրոջ հարսանիքով» (426),

---

[468] Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն», 2001, հ.1, էջ 94:

[469] **Հարությունյան Հ.,** Գեղարվեստական խոսք, Երևան, «Սովետական գրող»,1986, էջ 266:

[470] **Խաչատրյան Գ.,** նշվ. աշխ., էջ 26:

[471] **Ասատրյան Մ.,** նշվ. աշխ., էջ 97:

[472] Տե՛ս **Աճառյան Հ.,** Հայոց անձնանունների բառարան, Երևան, 1948, հ. 4, էջ 537-538:

[473] Տե՛ս **Մարկոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 82:

[474] Տե՛ս **Մալխասեանց Ս.,** Հայերէն բացատրական բառարան, Երևան, ՀՍՍՌ պետ. հրատ., 1944, հ. 3, էջ 145:

«Ավետրքի ջրաղացատեղերից» (420), որոնցում, կարծում ենք, հեղինակը պահպանել է **ը**-ով հնչատարբերակները՝ ընդգծելով խոսվածքին հատուկ վերջընթեր շեշտադրությունը և իբրև արտահայտչամիջոց՝ դրանով ևս տարբերակելով իր կերպարների խոսքը, քանի որ Լոռու խոսվածքում **ը**-ն համեմատաբար լայն կիրառություն ունի:

Ժողովրդախոսակցական ոճին բնորոշ է նաև մտքի արտահայտում վերհատույթային միավորի՝ հնչերանգի միջոցով, օր.՝ «Հերդ էլ սովա՜ծ սոված, ծարա՜վ ծարավ»(338), «-Չէ՜, չէ...»(338), «...քո պապ Աբելը, խո՜ր գնա» (340), «Էլ պրծա՜վ, չէ՜, էլ ծեծ չեմ ուտի» (360), «Երանի քե՜զ» (374), «-Հա՜,-մռռաց Արուսը...» (371), որոնք ձևով գրական են, իսկ իմաստով՝ խոսակցական, երբեմն էլ՝ բարբառային շեշտադրությամբ, օր.՝ «-Վա՜նքերեցի, -կանչում էին է՜ վերևներից...(349), «Այ տղա, է՜յ, սի՜մոնացու, թևիցդ կբռնեմ ու դուրս կշպրտեմ, վա՜լոդացու...» (375), «...աչքալույսն ի՜հինչ» (401), «-Այո...խելքը՜դ» (429) և այլն: Հարկ է նշել նաև, որ բառի վերջնավանկային ձայնավորը երկարացվում է հարցական հնչերանգով արտասանության դեպքում, ինչն էլ երաժշտականություն է հաղորդում Լոռու խոսվածքին[475], օր.՝ «Բա են լավ-լավ տերտերնե՜ղդ» (362), «Եսի՞մ, էնքան հանկարծ եկար»(345), «Համմե՞»(402) և այլն: Նման օրինակներով ավելի է ընդգծվել ժողովրդախոսակցական բնույթի տարրը, որը հեղինակը գործածել է կերպարների խոսքին հուզարտահայտչական մտերմական երանգ և գնահատողական վերաբերմունք հաղորդելու համար, նաև՝ տիպականացնելու բարբառախոս կերպարներին:

Բառապաշարային իրողություններ: Ժողովրդախոսակցական ու բարբառային բառերը ինքնանպատակ չեն Հ. Մաթևոսյանի այս ստեղծագործության մեջ ևս: Պատահական չէ, որ մեր կողմից քննվող նյութում հեղինակի պատկերած գեղարվեստական միջավայրն ամբողջանում է **Ծմակուտ** անունով՝ բաղադրված *ծմակ* արմատից, որը մի շարք բարբառներում պահպանվել է «1.հյուսիսահայաց անարև, ստվերոտ տեղ, 2. անտառ»[476] իմաստով, և «տեղ կամ ինչ-որ բանով հարուստ վայր» նշանակությունն ունեցող *–ուտ* ածանցից, օր.՝ «Մոսկվայից, Ծմակուտի վրայով, Երևան են հասնում մի 100 րոպեում»(336): Բարբառային պարզ, միաժամանակ անհրաժեշտ ու բազմաբովանդակ նման բառի միջոցով «...հնարավոր կլինի ասելիքը «չասելով ասելու» և կռահումը ընթերցողին թողնելու...»[477] ինքնատիպ ոճական հնարք կիրառել: Արձակագիրն այս հատուկ անունից ստեղծել է հասարակ գոյական, որով բնութագրել է միամիտ, պարզ ու համակերպվող կերպարներին անգամ մեկ բառով կամ արտահայտությամբ՝ նրանց հակադրելով պայքարող, համարձակ ու հնարամիտ կերպարներին, օր.՝ *ծմակուտեցի*՝ «...եթե Վանքերի կողմին է քաշել՝ չի կորչի, իսկ եթե, Սիրանույշ ջան, ծմակուտեցի է՝ թեկուզ հանրահաշվից էլ ուժեղ լինի» (337) և այլն: Այդպես և բարբառային կազմությամբ բառը, լինելով բնութագրական ու դիպուկ, կիրառված է որպես մականուն, օր.՝ «Մուրադեց Ռխաբացը հանդ գնալիս տանձենուն փետը քաշեց»(338), «Գոդի Արտաշը դրա պատասխանը տվեց» (357) և այլն: Դրանք, որպես «...գնահատողական երանգ ունեցող բառեր»[478], բնականաբար արտահայտում են գրողի կամ նրա կերպարի գնահատողական վերաբերմունքը, ինչպես և ոճական այլ նշանակություն: Հարկ է նշել, որ նման երանգ ունի բնագրում տեղ գտած բարբառային բառաձևերի զգալի մասը, այսպես՝ *ըռխավոր,* որը, կազմված լինելով *ռէխ*(<երախ) բառից, գործածվել է *«1.ագահ, աչքածակ, 2. ամենակեր, մեծաբերան»* իմաստներով՝ «...չունեն Ներսեսի ճարպկությունն ու ռխավոր պաշտոնասիրությունը»(410). կարծում ենք՝ արտահայտում է նաև *«1. դիրք և ազդեցություն ունեցող, 2. փիսբ. պաշտոնավոր»*

---

[475] Տե՛ս **Ասատրյան Մ.,** նշվ. աշխ., էջ 149:

[476] Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն», 2002, հ.2, էջ 416, **Սարգսյան Ա. Յու.,**Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, 2013, էջ 309:

[477] **Հալաջյան Մ.,** նշվ. աշխ., 2017, էջ 176:

[478] **Մարության Ա.,** նշվ. աշխ., էջ 209:

նշանակությունները՝ «Դու որ մի ռխավոր մարդ լինեիր՝ գիտե՞ս ինչ կանեիր» (416), կամ՝ *առնավուղ//առնա(վ)ուտ//ըռնաուտ* (թրք. arnavut (այբանացի)), որը Ղարաբաղի բարբառում նշանակում է «շատակեր, որկրամոլ»[479], Արարատյան բարբառում՝ «կատաղի, չար, երես առած» և «հաղթանդամ, վիթխարի»[480], ըստ Լ. Եզեկյանի՝ «...հենց այս իմաստով էլ գործ է ածվում»[481] «...այդքան լեզու առնաուտ Իշխանի դեմ» (346) օրինակում: Կարծում ենք, որ այն ունի նաև «շատակեր» նշանակությունը հետևյալ օրինակներում՝ «Անունս Աղուն չէր, առնաուտ քուրդ էր, շա՛տ շատ էի ուտում իրենց չեղած հացը»(340), «-Առնաուտ, քուրդ, առնաուտ, քուրդ»(348): Տեղին ենք համարում նշել, որ ժողովրդախոսակցական լեզվում **քուրդ**-ն ունի «օտար, ոչ բարեկամասեր» իմաստը:

Բարբառային բառաշերտն են կազմում քննվող բնագրում առկա այնպիսի բառեր ու բառաձևեր, որոնք, ձևաբանական տարբեր ենթահամակարգերին պատկանելով, հատկանշական են կա՛մ Արարատյան, կա՛մ Ղարաբաղի բարբառային միավորներին, այսպես՝ *գոյական՝ կարտոլ*[482]՝ «...կարտոլ է՝ կարտոլ էլ կեր»(338), *չափար՝* «չափարի տակ թեքվում էր սկեսուրը» (342), *նանի՝* «-Հա, նանի ջան»(344), «...էդպես աղյուս շալակած ապրես հարյուր տարի, նանի ջան»(347), *ջվալ՝* «...տեսավ դեղին կալերը և լիքը ջվալները»(342), *յախու*[483]՝«...պառավը եկավ, յախու դրեց փորին»(354), *ըշտարար*, որի բնագրային ձև *աշտարար-ն*[484] է՝ «Շողերը վար դրեց աշտարարը»(410-411), *ածական՝ մաղյան*[485]՝ «...քռքռում էր մաղյան ձիու պես»(426), *շաշ՝* «Վարդանենց շաշ Արտավազդը»(402), *բայ՝ թոխրել*[486]՝ «...ուզեց թորխիչը գտնել ու թորխել կարտոլը» (422), «-Էկել եմ ձեր տունը շնհավորեմ»(354), «...շապիկների մեջ ոջիլ կար, երեխան բյթբյթոտել էր» (343), «Շողերը ցորեն էր քամհարում»(410), *շրղահարել «շյուղերը թափահարել»՝* «Երեխան այգում էր, դեղձենին շղահարում» (360), *ճրղատվել* «մասնատվել»՝ «...Սիմոնը ճղատվում էր կոլխոզի գործի և տան արանքում»(353), *մակբայ՝* «...խեղճ Փիլոն կարեցածի չափ թռցնում հա թռցնում է կոլխոզից»(365), «...երեսանց մխիթարում Աղունին» (346), *կապ՝* «...էս գդալնին ձեզ համար եմ շինել»(354), *վերաբերական՝* «-Հաջողում»(410), «...գեղեցկացել ես, հո առողջարան-մառողջարա՞ն չես գնացել»(426), *ձայնարկություն՝* «տո էլի՞ տնկվեցիր դեմս»(342), «-Տղամարդ ես, տո՛, շուտ-շուտ արի» (418), «-Տո գնա, չեմ գալիս»(418), «-Ա դե հիմար-հիմար քիչ խոսիր»(414), «Պահ, պահ, պահ, -ասաց Ադամը» (345), «Հը՛,-սպասեց Ադամը» (406), «...մարդիս հետ էլ՝ փիշի-փիշի» (364) և այլն:

Լոռու խոսվածքային բառաշերտին են պատկանում *ական* «անկորուստ, լրիվ»[487] ածականը, որը գործածական է նաև Ղարաբաղի բարբառում՝ *ական-սական* հարադրությամբ՝ «անխաթար, տեղը տեղին, կարգին»[488] նշանակությամբ, օր.՝ «-Բա՝ չեկա՞ր տեսար խոզերը ական են, հավերը ական են»(383), նաև մակբայական կիրառությամբ՝ «...կայարանը լիքը ժողովուրդ-աղջիկ ես՝ բեռներդ ական պահիր»(382),

---

[479] Տե՛ս **Սարգսյան Ա. Յու.,** նշվ. աշխ., էջ 66:

[480] Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն», 2001, հ.1, էջ 100, **Մարկոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 321, 367:

[481] **Եզեկյան Լ.,** Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2003, էջ 173:

[482] Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն», 2004, հ.3, էջ 68:

[483] Այդ մասին տե՛ս **Հալաջյան Մ.,** նշվ. աշխ., 2001, էջ 172:

[484] Մանրամասն տե՛ս **Խաչատրյան Գ.,** նշվ. աշխ., էջ 30-31:

[485] Տե՛ս **Ասատրյան Մ.,** նշվ. աշխ., էջ 32, Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն», 2007, հ.4, էջ 8:

[486] Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն», 2002, հ.2, էջ 124:

[487] Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան , «Գիտություն», 2001, հ.1, էջ 23:

[488] Տե՛ս **Սարգսյան Ա. Յու.,** նշվ. աշխ., էջ 35:

աչ/ջող՝ «Ոտքի տակ մի շատ աջող փայտ կար»(363), *այտա*«այ տղա» ձայնարկությունը, որը արագաբանության հետևանքով և **ղ**-ի անկմամբ վերածվել է համադրական բարդության՝ ի սկզբանե ունենալով այդ նշանակությունը, ապա բառիմաստի ընդլայնմամբ դարձել է դիմելածև, «դիմողական կոչական»[489] ընդհանրապես, օր.՝ «-Այտա ի՞նչ է»(340), «-Այտա...այտա, նրա տեսածը իմ տեսածից շատ է»(414) և այլն: Նշենք նաև, որ հեղինակն իր կերպարների լեզվին բնականություն ու տիպականություն հաղորդելու նպատակով միտումնավոր կրկնել է Լոռու խոսվածքից անբաժան «այտա» բառը, որ «...կարծես առանց այդ բառի խոսքն ու միտքը անավարտ կլինեին»[490]:

Մեր կողմից քննվող նյութում, ինչպես իրավամբ նկատել են, Հ. Մաթևոսյանն իր կերպարներին խոսեցնում է Լոռու տարբեր ենթախոսվածքներում[491] առկա բարբառային բառաձևերով՝ ոչ միայն ամբողջական դարձնելու նրանց նկարագիրը, այլև այդկերպ անհատականացնելու նրանց[492]: Այս կարգի լեզվական երևույթների հանդիպում ենք Սերոյի պատասխաններում՝ «-Բա՝ չեկա՞ր տեսար խոզերը ական են, հավերը ական են»(383), «-Վուեյ-սրանցավարի հեգեց երեխան»(385), դարպասեցի «մերացուի» խոսվածքին բնորոշ բառերից՝ արտահայտված Աղունի հիշողությունների ու երկխոսությունների մեջ՝ «...դեկտեմբերից չթողեց դասի գնամ իմ դարպասեցի մերացուն՝ «անինթյունակ ա»: Ինքն ինթյունակ էր,...Իշխանին Իխշյան է ասում. Իխշյան ճան»(384), «...տորք ծեծել էլ չէի կարող, անինթյունակ էի» (386) և այլն: Այս և նմանատիպ բարբառային բառաձևերի կիրառումը՝ իբրև ոճական հնարք, «...միանգամայն տեղին և արդարացված»[493] է, քանի որ դրանք հնարավորություն են ընձեռում գրողին միտքն արտահայտելու սեղմ, բայց պատկերավոր, կերպարների խոսքը՝ ավելի բնական ու համոզիչ՝ միաժամանակ ստեղծելով գեղարվեստական միջավայրի երանգավորում: Այդպես և, օրինակ, խոզարած «Նիկալ պապի» խոսքի անմիջականությունն ու մտերմիկ երանգն ապահովում է բարբառային հնչողությանը համապատասխան իրողությունների անհրաժեշտ գործածումը՝ «-Էկել եմ ձեր տունը շնհավորեմ, այտա, էս ինչ լավ տուն ունեք ...էս գդալնին ձեզ հմար եմ շինել, ճաշ կուտեք, այտա... Վախեք ոչ, ամա էլ կսարքեմ» (354-355) և այլն: Նկատելի է, որ բարբառային-ժողովրդական «...այս պարզ ձևերը պարզորոշ ընդգծում են հերոսների խոսքն ու կերպարը՝ ընթերցողին տեղափոխելով գյուղական պարզ, ձևականություններից զերծ աշխարհը»[494]:

Բարբառային-խոսակցական լեզվաշերտի մասն են կազմում տարբեր ածանցներից բաղադրված բառաձևերը, որոնք ևս անընդունելի են արդի գրական նորմին, ինչպես՝ *ացու*՝ «...իմ ախպերացու Վալոդը տակվերոց արեց»(372), «...ասաց դարպասեցի մերացուն» (345), *դրա թեք հոլովաձևով*՝ «...քաշեց իր տնացվի տեղը» (353), «...Իշխան, մերացվին մի թող էդքան տանջի»(341), *ական*՝ «...դեռ հորենական օժիտի մեջ է քնում» (365), «...դարպասեցին տակվերոց արեց նրա մորենական գորգը»(345), *էցի*՝ «...տալ վանքերեցու ձեռքը. եթե վանքերեցին արժանի լիներ» (346), «...զրուցեց սևքարեցի պառավի հետ»(409), *իկ*՝«...հո կնի՞կ չի»(357), *իչ*՝«...ուզեց թորխիչը գտնել ու թորխել կարտոլը»(422), *իք*՝«...նրա տալիքն էլ վաթսուն ռուբլի է»(397), *վարի*՝ «...երեխան սրանցավարի ժպտում էր»(413), *(ա)վոր*՝ «...մի հատ ականջավոր գլխարկ»(366), *ուտ*՝ «...բայց լոբուտի կողքին այդպես էլ քնել էր»(422)] *ք*՝ *բաժինք*[495]՝ «Սիմոնի բաժինք վերմակի մեջ»(355), *բաժանք*[496]՝ «...ինչպես կար բաժանքի առաջին ձմեռը»(343),

[489] **Ասատրյան Մ.,** նշվ. աշխ., էջ 147:
[490] **Սահակյան Կ.,** նշվ. աշխ., էջ 193:
[491] Ահնիձորի, Քարինջի, Մարցի, Լորուտի, Թեղուտի և այլ ենթախոսվածքներ:
[492] Տե՛ս **Խաչատրյան Գ.,** նշվ. աշխ., էջ 25:
[493] **Հալաջյան Մ.,** նշվ. աշխ., 2001, էջ 172:
[494] **Սահակյան Կ.,** նշվ. աշխ., էջ 189:
[495] Տե՛ս **Մարկոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 102:
[496] Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն», 2001, հ.1, էջ 147:

կաթոցք՝ «Ապրիլին կաթոցքը սկսեց» (352), *օվի*՝ «Կով կթելը հեշտ չի, բայց սովորովի է»(359) և այլն:

Ինչպես գիտենք, «...ժողովրդական կամ խոսակցական են կոչվում այն բառերը, որոնք լայն գործածություն ունեն և հասկանալի են շատերի համար»[497]: Խոսակցական իրողությունները, կրելով ու արտացոլելով տվյալ ժողովրդի ազգային լեզվամտածողությունը, համաժողովրդական են իրենց հասկանալիությամբ ու գործածականությամբ և դրանով իսկ լեզվի, նաև *գեղարվեստական խոսքի* (*Ս.Մ.*) ժողովրդայնությունն ապահովող հիմնական միջոցն են[498]: «Աշնան արև»-ում ժողովրդախոսակցական լեզվաշերտը կազմող լեզվի տարբեր ենթահամակարգերին պատկանող միավորներն ու կապակցությունները «...աչքի են ընկնում ոճական և արտահայտչական բազմազան երագներով»[499]: Դրանք կարելի է պայմանականորեն տարբերակել հետևյալ խմբերի. ***ձևով ժողովրդախոսակցական***, որոնք, ունենալով գրական նորմին համապատասխան տարբերակներ, օժտված են ոճական իմաստային նրբություններով ու արժեքով. դրանց գրական ձևերը, սակայն, տվյալ համատեքստում չունեն նույն արտահայտչականությունը, այսպես՝ «Արաղը դրված է կես հավի մոտ»(405) (*օղի*), «-Փեշդ ես հագնո՞ւմ»(403) (*քղանցք*), «...մեկը տաք ու լուռ քոքռռում է շատ մոտիկ»(422) (*ծիծաղել, քրքջալ*), «...և Արմենակին չանթել է երևանցի մի սվաղած սևը» (411) (*հափշտակել*, շպարված), «...հազիվ առիթ է, չեղած բեռները կապի ու քոչի Երևա՞ն» (337)(*տեղափոխվել*), «...գնում եմ մեծիս տնավորեմ»(368) (*ամուսնացնել*), *եսիմ*«Եսի՞մ, էնքան հանկարծ եկար»(345), «Արզումանյանի եղբայրը կին բերեց ռաստովներից եսիմ ում»(345) (*չգիտեմ*), «-Լավ, լավ, քեզ մի սպանիր, կամաց արի»(420) (*դանդաղ*), «Հավան ե՞ս, Աղունիկ» (345) (*համաձայնել, հավանել*), «...պիտի գնայիր եղբորդ քառասունքին, մի երեսատեղի շոր չունեիր» (344) (*հանրության առաջ ներկայանալի*), «...էդ արանքներում տակվերոց արեց»(345) (*ժամանակամիջոց, պահ*), «Մութաքայի մեջ՝ կար» (355) (*թիկնաբարձ*), «...մի քանի կոպեկ ես իրար գցել»(372)(*հավաքել, կուտակել, խնայել*), նաև՝ «...լաչառ Շուշանը բահը առած վրա էր քշել»(427), «Ձիերը լղար էին»(427), «...Սերո ջան, մի ղեկավար էլ հետը, որպեսզի քեզ բզի՝ թե ես խոտը էստեղ դիր...»(385), «...փափուկ յուղուձու արեց»(423), «...մի երկու շաբաթվա իրիկուն-առավոտում կարվի» (423) և այլն:

Դժվար է գրական լեզվում գտնել կամ «...չկա այնպիսի բառ, որ կարողանա լիարժեք փոխարինել»[500] բնագրում հանդիպող ժողովրդախոսակցական-փոխառյալ բառախմբին պատկանող հուզարտահայտչական երանգով *յար, ջան* և այլ բառերին, օր.՝ «Քոչարը զրնգում էր հասած արտերի վրա հանդով մեկ՝ յարրս, յարո՛ս...»(349), «-Ոտքդ ցավում է՞, Սերո ջան»(382), «Վայ մամա ջան»(378), «Չէ՛, տատի ջան, չեմ ուզում» (345), «Հոնարարը, Արուս ջան, էն է...» (368) և այլն:

Հեղինակը չի խուսափել կիրառել նաև բարբառային-խոսակցական բնույթ ունցող հասարակաբանություններ, որոնք հիմնականում առկա են երկխոսություններում և չեն ստվերում նրա խոսքարվեստը, օր.՝ «-Սեպերդ ինչի՞ ես բացել» (426), «-Բա քո շան լափին կաց» (389), «-Ախչի...ախչի...»(370), «...նրանք կգան, կլակեն, կթափեն...»(416), «-Ձենդ կտիր, քաշ»(363), «-Արա՛, Սամվե՛լ»(364), «...հովիվները խեղճ ջղայինին տվել են ֆերմայի ամբողջ երեսուն գամփռի ռեխը»(426), «Կնյազ Իշխանի տանը ես քոծ էի»(345), «-Քամակը բաց հերն է»(371), «...Որ կողքներիս ծնի ու սրտներիս ցավ տա» (350), «-Գնում եմ քո մեր Արուսին իշին դնեմ» (350) (*հայհոյել*), «-Մեր ցեղը գործ է անում, լպստվելու

[497] **Մարգարյան Ա.,** Ժամանակակից հայոց լեզու, Բառագիտություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ.,1993, էջ 185:

[498] Տե՛ս **Հարությունյան Հ.,** նշվ. աշխ., էջ 252:

[499] **Մարության Ա.,** նշվ. աշխ., էջ 209:

[500] **Ղամոյան Լ., Սարգսյան Մ., Քարտաշյան Ա.,** Երևանի խոսակցական լեզուն, Երևան, «Մունետիկ», 2014, էջ 43:

ժամանակ չունի»(363), «– Դե ռա՛դ եղիր, քո դեսն ուղարկողի հերն անիծեմ» (419), «Ախչի, տո հարսիդ հերն էլ թաղեմ» (372) և այլն:

Արտահայտման ձևով ***գրական, սակայն իմաստով ժողովրդախոսակցական*** են, օրինակ՝ «–Հենց ապրես,– զզվելով խնդրեց Սիմոնը,– հենց ապրես, ձենդ կտրիր» (418) (*գովեստ կամ սրտնեղություն*), «Հարսը տեսնես ինչ ցեղ է լինելու»(339) (*տեսակ, բնույթ*), «...երեխիս կերար, երեխիս հոգին կերար»(360)(*չարչարեցիր, տանջեցիր*), «...իսկ քո էդ լավ հերը քերանը ծուռ կանգնած էր մոտները» (340) (*1.խեղճուկրակ, անճար, 2.անխոս*), «...այս սկեսուրը մազերից բռնեց ու կողպեքով աղաց կողերն» (346), «Արմենի կողը հաստ է»(416), «Գիշերվա էն դառը կեսին»(380), «...տո էլի՞ տնկվեցիր դեմս» (342), «Քո բռնած գործերը» (395), «էդ ինչի՞ ես կոխել տունդ» (350), «Իմ տղերքին ես տվել եմ առողջություն ու մի ձեռք անկողին»[15,373], «Պատերազմի ժամանակ մի փոր կարտոլով ապրում էինք»(371) «...էս տներին-դռներին լավ կնայես» (405), «-Տնաշե՛ն,-ժպտաց Աղունը»(402), *ձայնարկություններից՝* «Ա՛յ ախչի» (411), «Ի՜... դարպասեցի...»(419), «-Իա՜...ներծծվելը էն ներծծվելն է էլի» (384)], «-Է...թո՛ւ» (419), «Ու քշելով անկողին.-Քոշ, քոշ, քոշ»(397) և այլն: Այս բառախմբի բառերից փոխանվանական կիրառությամբ գործածված է **պղինձ**-ը՝ **պղձե կաթսա** բառակապակցության փոխարեն՝ «Մանեն կռացած պղինձ էր լվանում, որ չղռմռաց՝ «պղինձը գլխովդ կտամ...»(348), **տասներորդում**-ը՝ համապատասխանելով **տասներորդ դասարանում** արտահայտությանը՝ «-Էս տարի նոր վերջացնելու է, տասներորդում է» (415), նույնն և՝ **յոթերորդը՝** «-Յոթերորդը վերջացնես կգնաս» (400), **լիտրանոցը՝ մեկլիտրանոց շիշ** կառույցի փոխարեն՝ «...ասաց Սիմոնը, լիտրանոցը տարավ...» (402) և այլն: Ինքնատիպ են նաև **վրա** կապի իմաստային դրսևորումները, այսպես՝ «Մի երկու ամսվա վրա որոշեցին»(346) «*հետո*», «Վրա ութերորդ օրը ցավերը բռնեցին»(350) «*ընթացքում*» իմաստով, իսկ հարադրությունների մեջ՝ «...պառավը վրա քշեց Մանեին»(348), «...որպեսզի հետո վրա տա ավելի չար ու սուր»(427) *«հարձակվել»* նշանակությամբ: Այդպես և **քաշել** բայը իմաստային տարբեր կիրառումներ ունի, որոնք արտահայտվում են միայն համատեքստում՝ «...քո բաժին տանջանքը ես արդեն քաշել եմ»(343) «*կրել, դիմանալ*», «...գիտեր թե ինչ կլինի քաշած նա դարպասեցի մերացվի ձեռքին»(347) «*հանդուրժել*», «Չի հասկանում, քեռուն է քաշել» (337) «*նմանվել*», «Մուրադեց Ռխաբացը հանդ գնալիս տանձենուն փետը քաշեց»(338) «*գողանալ, տանել*», իսկ կրավորական տարբերակը՝ «*անցել*» իմաստով՝ «...քեզանից էլ խոզի ոջիլ էր քաշվել երեխայի վրա»(355) և այլն: Հ. Մաթևոսյանը, հարազատ մնալով իր որդեգրած սկզբունքներին, իր կերպարների ապրած գեղարվեստական ժամանակաշրջանն ամբողջապես չէր կարող արտացոլել առանց ռուսերենից անցած փոխառությունների ու օտարաբանությունների, որոնք, խոսակցական բնույթ ունենալով, ըստ հարկի համադրվել են գրական տարրերով, օր.՝ «Սյուիտ և բյուրոկրատ» (341), «Ես ռեալիստ եմ»(370), «...թող գնա իր տեղը գտնի: Վսյո՛»(417), «Վանքերի կնյազ Նիկոլը»(377), «-Աղջիկը հնժեներ է» (368), նաև՝ «...խեղճ Փիլոն կարեցածի չափ թռցնում հա թռցնում է կոյխոզից» (365), «Շոֆերին ասել եմ...» (429), «Արմենակը թերթերում շրջկոմների քարտուղարներ է քննադատում» (364), «Ժուռնալիստների միությունը...»(341) և այլն:

Քերականական իրողություններ: «Աշնան արև» վիպակում ոճական ուրույն նշանակություն ունեն հատուկ անունների ուղիղ ու թեք հոլովաձևերի միասին կիրառությունները. նման կերպ անձինք տարբերակել են միմյանց, ինչը բնորոշ էր ժողովրդախոսակցական լեզվին, օր.՝ «Ես Եգորի Սիրուշը չեմ»(364), «Սաքոյի Լուսիկն»(412), «Քոչարի Հրանտը Կիրովական ավտո է առել» (408), «Վրացոնց Արշակի Սուրենն էր» (413), «...ամենասիրունը Սիմոնի Աղունն է» (405), «Լևոնի Ելենը սիրուն է»(405), «...իմ սկեսուրը Աբելի Արուսն է եղել» (375) և այլն, այդպես և՝ «գերդաստան, ցեղակցություն» մատնանշող *-ենք* հոգնակերտ մասնիկի սեռական հոլովաձևով հարադրությունները, օր.՝ «Մուրադենց Սրբուհին»(357), «Մելքումենց Իվանը»(410), «Աթոյենց Ստեփանի տունն»(408), «Վարդանենց Արտավազդը» 402] և այլն: Այսօրինակ

կիրառությունները ճանաչողական ու բնութագրական են կերպարների համար, միաժամանակ ընդգծում են նրանց անհատականությունը:

Այս կարգի իրողություններից հետաքրքական են նաև հատուկ անուններից հասարակների կազմությունները մաթևոսյանական ընտրության տեսանկյունից, այսպես՝ «...Այ տղա, է՛յ, սի՛մոնացու, թևիցդ կբռնեմ ու դուրս կշպրտեմ, վա՛լոդացու...»(375), «...եսի՞մ ինչ սիմոնացվի բաժին է դառնալու հովիտներում»(410) և այլն: Վերջիններս, լինելով ոճականորեն ակտիվ, արտացոլում են խոսակցի գնահատողական վերաբերմունքը: Մեկ այլ դեպքում ոճական նպատակներով նորմայից շեղում է տեղանունների հոգնակի թվով կիրառությունը, որն «...արտահայտում է տվյալ վայրը և նրա նման այլ վայրեր իրենց ամբողջ ընդգրկմամբ»[501], օր.՝ «Արզումանյանի եղբայրը կին բերեց ռաստովներից եսիմ ում» (411):

Արդի գրական հայերենի հոգնակի թվով գոյականներից տարբերվում են կիրառված *քթեր, փեշեր* ձևերը, որոնք հատկանշական են խոսակցական լեզվին, օր.՝ «...շուկան քթերիս տակ է»(337), «...սրանք՝ փեշները քշտած աղջիկ փնտրեցին» (365): Իսկ գրաբարից ավանդված արմատից և **-եր** հոգնակերտից բաղադրված «*կռներ*»-ը համաժամանակյա կտրվածքով բարբառային է, օր.՝ «Սիմոնիս կռներին մատա՛ղ»(344): Մեր կողմից քննվող նյութում առկա է Արարատյան և Ղարաբաղի բարբառներին բնորոշ **-նի** հոգնակերտով հետևյալ կիրառությունը՝ «...էս գդալնին ձեզ համար եմ շինել»(354):

Ոչ գրական **-ք**, **-անք, -էնք, -օնք** հոգնակերտ թեքույթներով կազմությունների ուղիղ ու հոլովված տարբերակները, տարածված լինելով ժողովրդախոսակցական լեզվում, բարբառային երանգ են հաղորդում մաթևոսյանական արձակին, օր.՝ «...չգիտեմ մերը պրծե՞լ է թե երեխեքն են կորցրել» (367), «...տղերքդ էլ ողջ-առողջ պտույտ են գալիս շուրջդ»(358), «...դուրս գցեց հորանց տված մահճակալը» (354), «Աղունը Վանքեր հորանց էր գնացել»(355), «...պապոնք ունեիր»(363), «...իմ պապոնց տուն էլ եկել էր իմ մոր պապոնց տնից»(369) և այլն: Հավաքականության իմաստ ունեն *-եցի* ածանցի հոգնակի ուղղականով բառաձևերը՝ «...միրգ ծախելու եկած ղազախեցիք»(346), «...նրա գորգը գործեն հովիտեցիք»(368) և այլն:

Ոչ գրական նորմին հատուկ լեզվական հետաքրքրական իրակություններ են նաև բայական հարադրությունների՝ -ք հոգնակերտի սեռական-տրական հոլովաձևով արտահայտված վերադիրները, ինչպես՝ «...գելերոց լինես, նանի ջան»(355) «*գայլերի բաժին դառնալ*»[502], «Տերտերոց լինես, նանի ջա՛ն: Գիր անել էր տալիս, գելերոց լինես» (355), «...հիմա հավերն էլ աղվեսերոց կլինեն» (356), «Օժիտի կարպետը դարպասեցին էդ արանքներում տակվերոց արեց»(345), «...իմ ախպերացու Վալոդը տակվերոց արեց»(372) (վերջինս համարժեք է խոսակցական լեզվում տեղ գտած *տակօվ* (Ղարաբաղի բարբառում՝ *տակավ*) *անել* հարադրությանը՝ *«գողանալ, յուրացնել, թաքցնել»*[503] իմաստներով) և այլն: Այս կազմությունները դարձվածային միավորի արժեք ունեն: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Լոռու որոշ գյուղերում միավանկ մի շարք բառերի հոգնակին կազմում են **-ան** մասնիկով, իսկ մյուսներում համարժեք **-էր**(**-եր**)-ով, օր.՝ *գայլ>գյէլ, հոգ. ուղղ.գյիլան-հոգ.սեռ. գյիլանց*[504]*:* Կարծում ենք՝ վերոնշյալ մյուս ձևերը թերևս առաջացել են համաբանության հետևանքով կամ այլ բարբառային միավորի ազդեցությամբ[505]:

---

[501] **Մկրտչյան Ռ. Խ.**, Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Երևան, ՀԳԱ հրատ., 1991, էջ 75:

[502] Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն», 2001, հ.1, էջ 234:

[503] Տե՛ս **Սարգսյան Ա. Յու.,** նշվ. աշխ., էջ 708:

[504] Տե՛ս **Ասատրյան Մ.,** նշվ. աշխ., էջ 18:

[505] Կարնո բարբառում *-ք* հոգնակի ստացող որոշ գոյականներ հոգնակի սեռականում ստանում են *-օց* (տե՛ս **Մկրտչյան Հ. Մ.,** Կարնո բարբառը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ, 1952, էջ 45):

Ինչպես ուղիղ, այնպես էլ թեք հոլովաձևերի հոդառությունը ևս բնորոշ է Լոռու խոսվածքին[506], ուստի խնդրո առարկա նյութն անմասն չէ նմանաբնույթ կազմություններից, օր.՝ *սեռական*՝ «...տանձենուն փետը քաշեց» (338), *գործիական*՝ «Մեջների խղճովը Սիրանն էր» (348) և այլն: Ստացական հոդով տարբեր հոլովաձևերով կազմությունների մի մասը բարբառային լեզվաշերտի մեջ են դասում, իսկ մյուս մասն էլ, բաղադրված ընդհանուրհայերենյան արմատներից, ավելի մոտ է ժողովրդախոսակցական լեզվին, այսպես՝ *սեռական*՝ «-Ախպերը...ախպորդ ցավը տանեմ»(339), «...տղիդ հերն էլ անիծեմ»(372), «...շուկան քթներիս տակ է»(337), մեկ այլ դեպքում կապակցությամբ՝ «Քո լեզվիդ տերը մեռնի, քո լեզվիդ»(411), *հայցական*՝ «Տղերանցդ ուղարկել ես»(409), *բացառական*՝ «-Վեր թռիր տեղիցդ...»(337), «Աղջկանիցդ տեղեկություն ունե՞ս» (429), *գործիական*՝ «...պղինձը գլխովդ կտամ»(348) և այլն: Նկատելի է, որ ստացական հոդով բառաձևի և դերանվան սեռական հոլովի համատեղ կիրառությունը նպաստում է իմաստի ընդգծմանը[507]: Ներգոյական հոլովի իմաստն արտահայտել է գրաբարից ավանդված *միտս* «մտքումս» (<ի միտս) բառաձևով՝«...Մի բան էր միտս, մոռացա»(383):

Բարբառային բառաշերտին հատուկ *ստացական դերանունների* հոգնակիանիշ ձևերի օրինակներից են՝«-Իմո՞նք որտեղ են ծնվել» (374), «Քոնոնք գուցե ավելի ծանր լինեին»(369), «...քոնոնց բուրդը լվացած չէ» (369) և այլն, որոնք ևս նպաստում են մտքի սեղմ արտահայտմանը:

Խնդրո առարկա բնագրում հանդիպում են Լոռու խոսվածքին, ինչպես և Ղարաբաղի բարբառին բնորոշ ըղձական եղանակի ապառնու ժխտականի կազմություն՝ **ոչ** հետադաս մասնիկով[508], օրինակ՝ «Վախեք ոչ, ասան էլ կսարքեմ»(354-355):

Նկատելի է, որ բարբառային բառաշերտի մեջ դասվող բառաձևերն ու քերականական իրողությունները, ունենալով տեղայնացված բնույթ, ոճականորեն լիցքավորված տարրեր են:

Ժողովրդական լեզվամտածողությանը հարազատ մնալով՝ արձակագիրը ժամանակի պարագան արտահայտել է գոյականի ներգոյական հոլովաձևով, օր.՝ «...էդ արանքներում տակվերոց արեց»(345) «...մի երկու շաբաթվա իրիկուն-առավոտում կարվի» (423) և այլն: Հրամայական եղանակաձևին հորդորական իմաստ ու մեղմ երանգ է տալիս **մի** բառ-մասնիկը[509]՝ «-Էն երեխայի դպրոցին մի հետևիր,-ասաց Աղունը,-վատ է սովորում...» (429):

Ժողովրդախոսակցական բնույթ ունեն նաև բնաձայնական հիմքից բաղադրված բայերը, որոնց ըստ հարկի գործածումը ևս գնահատողական ու հուզարտահայտչական երանգավորում է հաղորդում կերպարների ու հեղինակի խոսքին, այսպես՝ «...հին ցավը օձի պես մի պահ շփշփաց փորում»(342), «...պատուհանի մոտ քթերում ղնդղնդաց»(345), «...որ չոռմռաց՝ «պղինձը գլխովդ կտամ» (348), «Սիմոնը դռփդռփելով կամուրջն անցավ»(413), «...ղռղռում են կամ բառաչում» (421), «...աչքերը ճպճպացնելով»(365), «...երեսուն հավը շխկշխկալով ձու է ածում»(364) և այլն:

Ուրույն դրսևորումներով կիրառված են բարբառային ու ժողովրդախոսակցական բառաշերտերին պատկանող հարադրավոր բայերը, դրանցից կազմված դարձվածային միավորները, որոնք, օժտված լինելով ոճական տարատեսակ նրբերագներով ու նշանակություններով, պատկերավորություն են հաղորդում Մաթևոսյանի այս բնագրին նույնպես: Այսօրինակ իրողությունների՝ բարբառային ու ժողովրդախոսակցական լինելու սահմանները դժվար է որոշել. կարծում ենք՝ թերևս *բարբառային* կարելի է համարել այն արտահայտությունները, որոնց կիրառությունը սահմանափակվում է որևէ բարբառով,

[506] Այդ մասին տե՛ս **Ասատրյան Մ.,** նշվ. աշխ., էջ 96:
[507] Մանրամասն տե՛ս **Մարկոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 140:
[508] Տե՛ս **Ասատրյան Մ.,** նշվ. աշխ., էջ 134:
[509] Տե՛ս **Մկրտչյան Ռ.Խ.,** նշվ. աշխ., էջ 235:

իսկ մյուսները, որոնք ընդհանրական տարածում ունեն արևելահայ խոսակցական լեզվում՝ *ժողովրդախոսակցական*, օր.՝ *բարբառային*՝ «պառավի յուղի հախից մի լավ եկան, կճուճը կես էր ընկել» (348), «բլուրների արանքից կարկուտը փախս է ընկնում» (336)], «Մանե հարսը նրանց թաքուն քսի էր տալիս» (346), «– Հենց ապրես, ռադ եղիր՝ աչքս քեզ չտեսնի» (419), «Այ տակռապակ լինի քո լեզուն» (393), «...քաղաքում իմ ընչին ոչ մի կնիկ քացի չի տա»(402), «...տանդ վրա չար աչք կա, ուզում են բախտդ կապել» (355) և այլն, *ժողովրդախոսակցական*՝ «հարյուր տարի է՝ ճաք է տվել մեծ ժայռը» (336), «...Աղունիկ, Սիմոնից մարդ սարքիր»(339), «...ծուխը ետ էր տալիս» (343), «...ինչպես են շաղ գալիս կրակները» (361), «...տանես քամուն տա՞ս» (370), «...քո դռնից էիր աչքիդ զոռ անում»(360), «...պառավին մատ եմ արել»(368), «...սրանք՝ փեշերը քշտած աղջիկ փնտրեցին» (365), «Համբո հորեղբայրը մի ժամանակ լավ թափ է վերցրած եղել» (408), «...ապրուստի գլուխն էլ հողեմ»(355), «-Տակուգլուխ ես անում» (415), «...Սամվելիս ցա՛վը տանեմ»(369), «-Համովը՝ դեռ համով է, համը տեսնենք երբ է դուրս գալու»(414), «...էդ ում ես մարդի տալիս, ախչի»(345), «-Ախչի, գործի՛դ գնա» (374), «...ուժեղների դեմ մոռանում են, որ լեզու ունեն»(347), «Գիրկապ լինես դու, Արո՛ւս» (378), «Քո լեզվիդ տերը մեռնի, քո լեզվիդ» (411), «...Ծմակուտի կողմը բերանը կապած է» (375), «Նրա հացում աղ կար» (374), «Հողի տակ հանգիստ չունենա քո պապ Իշխանը»(339), «...Լո՛ւս դառնաս, Նիկալ պապի» (355), «Ոչ մեկի գլուխն էլ յուղումեղրի մեջ չի» (429), «...ու դու էլ երեսդ դեմ էիր արել» (345) և այլն:

Հայտնի է, որ խոսակցական լեզուն գրականից տարբերվում է նաև անվանական ու բայական հարադրությունների տարածված կիրառականությամբ: Նմանաբնույթ բարդությունները բնորոշ են և՛ Արարատյան ու Ղարաբաղի բարբառերին, և՛ Լոռու խոսվածքին: Մեր կողմից ուսումնասիրվող բնագրային նյութը ևս հարուստ է կրկնավոր ու հնչյունափոխված անվանական հարադրությունների հետաքրքրական ու ինքնատիպ դրսևորումներով, որոնք, տարբեր խոսքիմասային պատկանելություն ունենալով, «...Մաթևոսյանի լեզվաոճական յուրահատկություններից»[510] են: Հարկ ենք համարում նշել, որ բարդությունների անհնչյունափոխ բառարմատները հիմնականում գրական նորմին համապատասխան տարրեր են, իսկ կրկնության դեպքում դրանք, իբրև ժողովրդախոսակցական լեզվում կիրարկվող իրողություններ, ոճական նշանակություն ունեն՝ պատկերավորություն հաղորդելով ոչ միայն կերպարների, այլև հեղինակի խոսքին: Լեզվի ստորոգական մակարդակում դրանք տարբեր շարահյուսական պաշտոններով են կիրառվել, այսպես՝ *ենթակա*՝ «էս ղաուրմա-մաուրման, խնձոր-մնձորը, հինգ հարյուր հատ ձու-մուն՝ զրո»(368), *որոշիչ*՝ «-Տաք-տաք գլխարկ» (408), «...թղթով հատ-հատ փաթաթածը ձու էր»(344), «Բա են լավ-լավ տերտերնե՛րդ» (362), *ձևի պարագա*՝ «...փող հաշվել չգիտի, բուռ-բուռ ստանում է, բուռ-բուռ էլ ծախսում»(337), «Սիմոնը նայում էր ու խեղճ-խեղճ ժպտում»(345), «-Մենք կամաց-կամաց ապրում ենք» (410), «Էնպես էլ կարևոր-կարևոր գալիս է՝ տեսնողը կասի...»(420), «-Երեխա-երեխա մի խոսիր, հենց ապրես» (416), «-Հիմար-հիմար քիչ խոսիր» (429), «...բարձր-բարձր զրուցեց սևքարեցի պառավի»(409), «-Տղամարդ ես, տո՛, շուտ-շուտ արի» (418), «...հերդ վեր կացավ ու հիվանդ-հիվանդ գնաց Հովիտ» (415), *ժամանակի պարագա*՝ «Կափարիչը հիմա-հիմա անաղմուկ ելնելու էր տեղից»(378), *բաղադրյալ ստորոգյալ*՝ «կարգին տղա՞ է, թե՞ լաթիրակ-մաթիրակ է» (400) և այլն: Իբրև *պարզ ստորոգյալ*՝ կիրառել է բայարմատի կրկնությամբ՝ «Հիմա տրաք-տրաքելու էր շան հաչոցը»[15,379], նաև բայական հարադրության վերադրի կրկնության բարբառային տարբերակ՝ *ետ-ետ անել*՝ «...պառավը ետ-ետ արեց»(348) «*նախանջել*»: Նկատելի է, որ ընդգծվածները հիմնականում արտահայտում են հատկանիշի գերակայություն, իմաստի սաստկականություն, բազմակիություն, տևականություն, երբեմն էլ՝ անորոշություն:

[510] **Խաչատրյան Գ.,** նշվ. աշխ., էջ 28:

Արձակագրի գրական ինքնատիպ կիրառումներից կարելի է համարել արմատի կրկնությամբ և գրաբարյան նախդրից բաղադրված անվանական վերադրով կազմությունը, որը բարբառային իմաստ է ձեռք բերել. *ինքպինք*՝ «Աստված ինձ ուրիշներին ու ինքզինք ուտող է ստեղծել»(361), որն այդկերպ տարածված էր Պոլսի բարբառում՝ «ինքն իրեն» իմաստով, նաև նույն հարադրությամբ՝ «1.իր մեջ կատաղել՝ բորբոքվել, 2.անհանգստանալ»[511] նշանակություններով. Արարատյան բարբառի որոշ խոսվածքներում *պինքը* «...գործածվում է որպես ուղղական»[512], իսկ Սյունիք-Արցախ տարածաշրջանի բարբառային միավորներում՝ *պինք՛ը* տարբերակով, որից էլ՝ *պինք՛ը օտէլ*-ը՝ նշված իմաստներով:

Բնական է, որ հասարակ, թերի կրթությամբ կամ անուս մաթևոսյանական կերպարների կենդանի խոսքի հնչեղությունն ու անկեղծությունը պայմանավորված են բարբառային, ժողովրդախոսակցական ու գրական տարաբնույթ բառային միավորների, կապակցությունների ու կառույցների հմուտ համադրմամբ: Ուսումնասիրության նյութի սահմաններում փորձել ենք ներկայացնել խնդրո առարկա բնագրի ոչ գրական լեզվաշերտն ամբողջացնող իրողությունների յուրովի դրսևորումները: Հայտնի է, որ այս լեզվաշերտը ներառում է ոճական նորմին համապատասխան բառախմբեր: Միայն Լոռու խոսվածքին հատուկ բառաձևերը սակավ են՝ ի տարբերությունն բարբառային տարբերակների:

Այսպիսով՝ քննության առարկա լեզվանյութը հարուստ է ժողովրդախոսակցական բառաշերտը ձևավորող տարատեսակ բառերով ու քերականական իրողություններով, քանի որ գրական արևելահայերենը կազմավորվել է Արարատյան բարբառի հիման վրա: Քննվող բնագրում տեսակարար կշիռով և հաճախադեպ կիրառությամբ զգալիորեն շատ են բառապաշարային տարբեր իրողությունները, որոնց մեծ մասը ժողովրդախոսակցական է, ապա քանակապես հաջորդում են ձևաբանական մակարդակին բնորոշ միավորները, որոնցից սակավաթիվ են բարբառային-խոսվածքային ենթաշերտին պատկանող եղանակաժամանակային ձևերը:

Բնագրային օրինակներով ներկայացված հնչյունափոխական երևույթները հիմնականում ձևավորել են բարբառային-խոսակցական տարբերակներ:

NON-LITERARY (DIALECTAL AND COLLOQUIAL) LANGUAGE LAYER IN «AUTUMN SUN» BY HRANT MATEVOSYAN

SVETLANA MANUCHARYAN
Goris State University, Faculty of Humanitiess, Deputy head;
Member of the Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA),
Ph.D. in Philology, Associate Professor,
Goris, Republic of Armenia

The article examines the non-literary (dialectal and colloquial) language layer of «Autumn Sun». The purpose of the staudy is to present the linguistic-stylistic expression of the elements that include that language layer. In order to achieve the goal, the objective of investigating the peculiarities of textual reality has been set forth. The colloquial and dialectal realities that deviate from the existing literary norms in the field of research are mainly general of the Araratian and Karabakh dialects and typical, the Lori dialect in particular. They are verbal and grammatical phenomena formed as a result of different types of an alternation. In this work, the words and phrases of a non-literary language layer have been used mainly to create an artistic environment

[511] Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն», 2001, հ.1, էջ 176:
[512] Տե՛ս **Մարկոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 128:

and characters. Especially the speech of heroes is rich in such examples. Folk-colloquial and dialectal language layers differ from literary ones in nominal and verbal forms, which are also common in the examined work. The word forms and grammatical realities that are included in the dialect vocabulary have a localized nature, the proper use of which gives an emotional expression to the artistic speech.

Methods of synthesis and comparison have been used during the research.

In the studied language material, currently after the literary forms, the folk-colloquial and then dialectal versions have a significant weight, and only the words and phrases specific to the Lori dialect are few.

Keywords: *dialectal words, folk-colloquial vocabulary, dialectal word forms, linguistic-stylistic expression, imagery, folk language thinking, artistic speech, stylistic significance.*

НЕЛИТЕРАТУРНЫЙ (ДИАЛЕКТНЫЙ И РАЗГОВОРНЫЙ) ЛЕКСИЧЕСКИЙ СЛОЙ В ПРОИЗВЕДЕНИИ ГРАНТА МАТЕВОСЯНА «ОСЕННЕЕ СОЛНЦЕ»

СВЕТЛАНА МАНУЧАРЯН
врио декана факультета гуманитарных специальностей
Горисского государственного университета,
член Объединения молодых ученых и специалистов Арцаха (ОМУСА),
кандидат филологических наук, доцент
г. Горис, Республика Армения

В данной статье мы рассмотриваем нелитературный (диалектный и разговорный) лексический слой произведения Гранта Матевосяна «Осеннее солнце». Целью исследования является представить, как реализуются лексические и стилистические элементы, которые входят в состав рассматриваемого лексического слоя. Данной целью обусловлена задача исследования – охарактеризовать особенности представленных контекстуальных реалий. Разговорные и диалектные реалии, которые отклоняются от существующей в исследуемой сфере литературной нормы в основном одинаковы для араратского и карабахского диалектов и особенно типичны для, лорийского говора. Это лексические и грамматические формы, образованные в результате различных фонетических изменений. В этом произведении Г. Матевосяна слова и выражения лексического нелитературного слоя использованы, главным образом, для создания соответствующей атмосферы и образов персонажей, речь которых отличается богатством языковых средств. Разговорные и диалектные лексические слои отличаются от литературных и особенностями номинально-вербальных и отношений, которые так же широко представлены в рассматриваемом тексте. Слова и грамматические формы языковых реалий, составляющие один из диалектных уровней, здесь уподоблены местному говору, что придает повествованию большую выразительность.

Во ходе исследования нами были использованы сопоставительный и сравненительный методы.

В результате исследования мы пришли к выводу о том, что в рассмотренном нами лексическом материале в наибольшей степени, после актуальных на современном этапе литературных норм, представлены разговорные,далее-диалектные варианты слов, в наименьшей степени – слова и выражения, характерные для лорийского говора.

Ключевые слова: *диалектные слова, народно-разговорный слой речи, разговорные словоформы, лексические и стилистические элементы, выразительность, народное речевое мышление, художественная речь, стилистическое значение.*